


Հ Ի Ի Ա Ն Դ Ը



սում էք, բժիշկ, որ նս առողջ եմ.
 Մինչդեռ դուք մերոնց յայտնել էք արդէն
 Պարզ ու բացորոշ, որ նս առողջ չեմ
 Եւ պատւիրել էք — խենթանոց տունն:
 Ա՛խ, բժիշկ, բժիշկ: Ճիշտ որ .. տխմար էք...
 Եւ դուք ընթռնել չէք կարող երբէք,
 Չեր իմ մէջ գտած այդ ախտը դժխեմ
 Մխիթարանք է հոգուս տխրադէմ:
 Չեր առողջ խելքը գին չունի իմ մօտ,
 Որով ինքներդ էք միայն հիւանդոտ:
 Ժիծաղելի է խօսքս ձեզ համար:
 Մինչդեռ, եղբու՛մ եմ, հարցնելով արդար,
 Թէ ո՛ւմը պէտք է տանել խենթանոց՝
 Մէկ ի՛նձ, թէ նոցա, որոնք որպէս օձ
 Չարանննգութեամբ մեր շուրջն ամեն օր
 Փրփռում են, շաշում գործով թունաւոր...
 Դատեցէք արդար. ես ամենի մօտ
 Եւ ամենուրէք պնդում էի միշտ,
 Թէ պէտք է ապրել այնպէս, ինչպէս ճիշտ
 Տիրոջ պատւերն է, պատւերը գթոտ.
 Թէ՛ բոլոր թշուառ եւ տգէտները
 Մեր եղբայրներն են. կուգէի մեղմել
 Նոցա վիճակը եւ կեանքը անել:
 Կոչ էի անում, որ հարուստները
 Չքաւորներին առատ բաժին տան:
 Զարոգում էի, որ մեր սրբազան
 Պարտքն է աշխատել, առանց յոգնութեան,
 Ի սէր ուրիշի բարեկեցութեան:

Եւ ինչ դուքս եկաւ. ոչինչ եւ ոչինչ:
 Նման ծառերով լոկ ոգեւորիչ
 Տաւառորութիւն թողեցի միայն,
 Բոլորը ինծնից հեռանում էին
 Կասկածոտ դէմքով, ու կրկնում էին՝
 «Խելագարել է, մի լսէք դրան»:
 Ես հանդիպեցի մի լաւ աղջկայ...
 Չքնաղ ու անմեղ՝ ահալար մաքրութեան.
 Եւ ինձ թւում էր, թէ Տէրը նրան
 Անմահ դրախտից մեր երկրի վրայ
 Ուղարկել էր մեզ միտ թարութեան:
 Պայծառ մտորման վառ երազանքներ,
 Վսեմ, գերազոյն, հուր զգացմունքներ,
 Թէ՛ միտք, թէ՛ հոգի, թէ՛ գեղեցկութիւն,
 Էմեն բարիքով առատ էր, լեցուն...
 Կոյսը սիրում էր բանաստեղծութիւն,
 Շքեղ գեղարեւատ, եւ երգը դալար,
 Աղբատ էր, սակայն, նա դժբաղդաբար...
 Եւ կատարեցաւ մի լաիրշ վաճառք,
 Վաճառք՝ խայտառակ եւ ամօթաբեր.
 Ոսկու շառաչով ծերուկը անարգ
 Գնեց դիցունու կուսութիւնն ու սէր:
 Ի զո՛ւր էին իմ՝ բողոք, հառաչանք.
 Ոսկու շաշիւնը հզօր նւագով
 Խեղդեց իմ ձայնը եւ դառն հեծժանք
 Հեծկտում էի արիւն արցունքով:
 Ա՛խ, չէք հասկանում, չէ՞ որ խորտակեց
 Իմ առաջ մի կեանք, անդարձ թառամեց:
 Եւ մեր օրերի աստուած Մամոնան
 Գարշ ձեռքով գրկած զոհը անկենդան
 Ետնադնակում էր անվերջ, անսահման:
 Իսկ դուք, իբր թէ ինձ կարեկցելով,
 Ասում էիք միշտ գաղտնի հեգնանքով.
 — «Ինչո՞ւ էք լալիս, աղջիկը, չէ՞ որ
 Բոլորովին խեղճ, թշուառ էր, աղբատ

Եւ հաւանօրէն նրան նորանոր
 Բախտ է խոստանում՝ այդ կապը առատ:
 Աստիճանաւոր ծերուկ ամուսին,
 Ճոխ փարթամութիւն, կառքեր թանկագին,
 Հիւրասիրութիւն, պատիւ ու յարգանք,
 Եւ միշտ ճոխ սեղան — երանաւէտ կեանք... » —
 Եւ աւելացնում՝ զաղտնի, խլածայն.
 — «Յիմարութիւն է կարեկցել դրան...
 Խելագարել է, էհ, թշուառական» —
 Փրկեցի մէկին խայտառակ կեանքից,
 Ուժով խլեցի կորստեան գրկից...
 Եւ կին կոչեցի նրան համարձակ,
 Հիւրասիրելով իմ նեղ յարկի տակ:
 Սիրեցի նրան սիրով սրբագան,
 Վեհ, աստուածատուր սիրով անասան:
 Մինչդեռ անգութը անխնայաբար
 Խաբում էր ինձ միշտ անամօթ աքար:
 Եւ հասաւ մի օր ժամը դառնութեան.
 Ա՛խ, այդ սեպհական խայտառակութեան
 Ժամը դառնաղի, միշտ էլ յիշում եմ
 Սրտամաշ թախծով, տանջանքով դժխեմ:
 Ի՛նչ վիրաւորանք, ի՛նչ ստորացում,
 Երբ մի օր յանկարծ ես տեսայ նրան
 Իշխանաւորիս վաւաշոտ գրկում՝
 Թագ ու պսակին իմ օրինական...
 Ես կանգնել էի շւարս, անծայն:
 Կարծես անդունդը սեւ, լայնաբերան
 Գրաւում էր ինձ իւր գերկը դաժան:
 Անցանելի էր... Մի ակնթարթում
 Մեռաւ ամեն ինչ՝ սէրս անսպասում,
 Ե՛ւ յոյս, եւ հաւատ... Է՛մեն, ամեն քան:
 Այդպիսի չքնաղ գեղեցկութեան հետ
 Նման վարք ու քարք՝ անս՛րգ, անհեթեթ.
 Հազիւ զսպեցի ես զայրոյթս վառ՝
 Խեղդելու նրան այդ ստի համար...

Իսկ ընկերներս բարեկամաբար
 կրկնում էին միշտ նոյնը անդադար.
 — «Դու չօգտւեցիր գեղեցիկ դէպքից,
 Իշխանաւորին կինդ դուր եկաւ,
 Եղբայր սիրելիս, այդ աւելի լաւ.
 Բազում օրինակ տւինք մենք կեանքից:
 Քեզ խոստանում էր փայլուն ապագայ.
 Մինչդեռ դու իզուր աղմուկ արեցիր,
 Բախտդ տուեցիր քամուն ցան ու ու ցիր.
 Խելագարուել ես, Աստուած է վկայ.....
 Նման խենթ քայլեր ես շատ եմ արել...
 Զուր չէ աշխարհն ինձ խենթ յայտարարել:
 Այո՛, տէր բժիշկ, դուք ճիշտ էք խորհում,
 Ի հարկէ, եթէ դատենք խստութեամբ,
 Ինձ՝ խելագարիս ձեր լայն աշխարհում
 Չկայ տեղ, դադար... Խենթանոց կերթամ...
 Դուք պայմանական առաքինութեան
 Եւ լոկ բացարձակ ստոր գարշութեան
 Հետ շփոթելով միտքը բանական,
 Կեղծ պատշաճութեան խաբող քողի տակ,
 Ժածկելով ձեր գարշ քայլը անառակ,
 Չեզ կ'համարէք առողջ ու խոհուն,
 Եւ կարեկցելով ձեր խենթ ընկերոջ,
 Մեղմիւ կ'սղմէք ձեռքերը սիրուն,
 Նրա «տարաբախտ» եւ «անտէր» կնոջ...

 Ասում էք, բժիշկ, որ ես առողջ եմ,
 Մինչդեռ դուք մերոնց յայտնել էք արդէն
 Պարզ ու բացորոշ, որ ես առողջ չեմ,
 Եւ պատւիրել էք խենթանոց տանին:
 Ես ինքս կերթամ... Չեր ձեռքից բէզար,
 Բայց պէտք է ասեմ զայրոյթով արդար
 Խայտառակ մարդոց՝ գալիք եւ անցեալ—
 Գերադասում եմ խելագար մնալ,
 Զան թէ ձեր առողջ միտքը ունենալ:

Ռուս. քարգմ. В. Мазуркевич-ից, Ե. Ա.